



# Ինչ պետք է իմանաք, երբ ստանում եք Կենսաթոշակային և մահացած թոշակառուներից հետո մնացած ժառանգորդների նպաստներ

## Բովանդակություն

Ներածություն	1
Ձեր նպաստների մասին	2
Մեր կողմից առաջարկված ծառայություններ	3
Ինչ պետք է հաղորդեք մեզ	4
Միևնույն ժամանակ աշխատելը և Social Security ստանալը	9
Այլ կարևոր տեղեկություններ	12
Մի փոքր Medicare-ի մասին	14
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	17

## Ներածություն

Այս գրքույկը բացատրում է Ձեր որոշ իրավունքներն ու պարտականությունները, երբ Դուք ստանում եք կենսաթոշակային կամ ժառանգորդների նպաստներ:

Մենք խորհուրդ կտանք Ձեզ կարդալ այս գրքույկը հիմա և պահել այն ապահով վայրում՝ ապագայում հղումներ կատարելու համար:

Եթե Դուք նաև ստանում եք Supplemental Security Income (SSI) (հավելյալ ապահովության եկամուտ) նպաստներ, ընթերցեք *What You Need to Know When You Get Supplemental Security Income (SSI)* (Publication No. 05-11011) (Ինչ պետք է իմանաք, երբ ստանում եք հավելյալ ապահովության եկամուտ)

## Ձեր նպաստների մասին

### Երբ և ինչպես ենք վճարում Ձեր նպաստները

Մենք Social Security նպաստները վճարում ենք յուրաքանչյուր ամիս: Տվյալ ամսվա նպաստները վճարվում են դրան հաջորդող ամսին: Օրինակ՝ հուլիս ամսվա նպաստը դուք կստանաք օգոստոս ամսին: Ընդհանուր առմամբ, օրը, երբ Դուք կստանաք Ձեր նպաստը, կախված է այն անձի ծննդյան ամսաթվից, ում եկամուտների պատմության հիման վրա ստանում եք ձեր նպաստները: Օրինակ, եթե Դուք նպաստներ եք ստանում որպես թոշակառու աշխատող, Ձեր նպաստի վճարման օրը հիմնված կլինի Ձեր ծննդյան ամսաթվի վրա: Եթե Դուք նպաստներ եք ստանում Ձեր ամուսնու/կնոջ աշխատանքի հիման վրա, Ձեր նպաստի վճարման օրը հիմնված կլինի Ձեր ամուսնու/կնոջ ծննդյան ամսաթվի վրա: Ծննդյան ամսաթիվ՝ Յուրաքանչյուր ամիս նպաստները վճարվում են՝

Ծննդյան ամսաթիվ	Յուրաքանչյուր ամիս նպաստները վճարվում են՝
1-10	Երկրորդ չորեքշաբթի
11-20	Երրորդ չորեքշաբթի
21-31	Չորրորդ չորեքշաբթի

Եթե Դուք ստանում եք ինչպես Social Security, այնպես էլ SSI նպաստներ, Ձեր Social Security վճարը կստանաք ամսի երեքին, իսկ SSI վճարը կստանաք ամսի մեկին:

### Էլեկտրոնային վճարումներ

Երբ Դուք դիմում եք Social Security նպաստների համար, Դուք պետք է գրանցվեք Էլեկտրոնային վճարումներ ստանալու համար:

Ուղղակի ավանդը հեշտ, անվտանգ միջոց է նպաստներ ստանալու համար: Կապվեք Ձեր բանկի հետ, որպեսզի օգնեն Ձեզ գրանցվելու հարցում: Դուք կարող եք նաև գրանցվել ուղղակի ավանդի համար՝ բացելով անվճար

my Social Security հաշիվ կամ կապվելով մեզ հետ: Դուք կարող եք նաև Ձեր վճարումը ստանալ Direct Express® քարտի ծրագրի միջոցով: Direct Express®-ի դեպքում, դաշնային վճարումների ավանդներն ուղղակի փոխանցվում են քարտի հաշվին: Direct Express® քարտի համար գրանցվելը արագ է և հեշտ: Չանգահարեք Գանձապետարանի Էլեկտրոնային վճարման լուծումների կոնտակտային կենտրոն՝ **1-800-333-1795** անվճար հեռախոսահամարով կամ գրանցվեք առցանց՝ **www.GoDirect.org** հասցեով: Social Security-ն նույնպես կարող է օգնել Ձեզ գրանցման հարցում:

Երրորդ այլընտրանքն է՝ Էլեկտրոնային փոխանցման հաշիվը: Դաշնության կողմից ապահովագրված այս մատչելի հաշիվը Ձեզ թույլ է տալիս վայելել ավտոմատ վճարումների անվտանգությունն ու հարմարավետությունը: Դուք կարող եք կապվել մեզ հետ կամ այցելել կայքէջը **www.eta-find.gov** հասցեով, որպեսզի տեղեկություններ ստանաք ծրագրի մասին կամ գտնեք բանկ, ինստիտուցիաներ և վարկ, կամ վարկային միություններ, որոնք առաջարկում են այսպիսի հաշիվներ:

Եթե Դուք չստանաք Էլեկտրոնային վճարումներ նախատեսված օրը, անմիջապես զանգահարեք մեզ **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով:

Եթե Դուք Էլեկտրոնային վճարում ստանաք, որը Ձեր իմացությամբ Ձեզ համար չի նախատեսված, ինդրեք Ձեր ֆինանսական ընկերությանը վերադարձնել այն U.S. Department of the Treasury: Եթե Դուք միտումնավոր ընդունեք վճարումներ, որոնք Ձեզ համար չեն նախատեսված, Ձեզ կարող են մեղադրել հանցագործության մեջ:

## Ձեր նպաստների դիմաց հարկերի վճարումը

Social Security նպաստներ ստացող անձանց մոտ 40 տոկոսը պարտավոր են հարկեր վճարել իրենց նպաստների դիմաց: Դուք ստիպված եք հարկեր վճարել Ձեր նպաստների դիմաց, եթե Դուք դաշնային եկամտահարկ եք ներկայացնում որպես «անհատ», և եթե Ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է \$25,000: Եթե Դուք միասնական եկամտահարկ եք ներկայացնում, Դուք պետք է վճարեք հարկերը, եթե Ձեր և Ձեր կնոջ/ամուսնու ընդհանուր եկամուտը գերազանցում է \$32,000: Եթե ամուսնացած եք և առանձին հայտարարագրեր եք ներկայացնում, Դուք հավանաբար հարկեր եք վճարելու Ձեր նպաստների դիմաց:

Որպեսզի դաշնային հարկերը պահվեն, Դուք կարող եք Internal Revenue Service-ից ստանալ Ձևաթուղթ W-4V՝ զանգարահարելով **1-800-829-3676** անվճար հեռախոսահամարով կամ այցելելով մեր կայքը: Ձևաթուղթը լրացնելուց և ստորագրելուց հետո, վերադարձրեք այն Ձեր տեղական Social Security գրասենյակը փոստով կամ անձամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Internal Revenue Service-ի **1-800-829-3676** անվճար հեռախոսահամարով՝ Հրապարակում 554, *Tax Guide for Seniors* (Հարկերի ուղեցույց ծերերի համար), և Հրապարակում 915, *Social Security and Equivalent Railroad Retirement Benefits* (Սոցիալական ապահովություն և համապատասխան նպաստներ թոշակառուների համար) ստանալու համար: Դուք կարող եք նաև այցելել IRS կայքը՝ **www.IRS.gov** հասցեով:

## Մեր կողմից առաջարկված ծառայություններ

### Social Security անվճար ծառայություններ

Որոշ բիզնեսներ գովազդում են, որ կարող են վճարի դիմաց տրամադրել անվանափոխություն կամ Social Security քարտեր: Մենք այս ծառայությունները մատուցում ենք անվճար, այնպես որ մի վճարեք դրանց համար: Սկզբում զանգահարեք մեզ կամ այցելեք մեր կայքը: Social Security-ն լավագույն վայրն է Social Security-ի մասին տեղեկություններ ստանալու համար:

### Տեղեկությունների թարմացումներ

Ժամանակ-առ-ժամանակ մենք կուղարկենք Ձեզ կարևոր տեղեկություններ Ձեր Social Security նպաստների վերաբերյալ, ինչպիսիք են՝

- **Ապրուստի միևնույնի շտկումներ:** Եթե ապրուստի միևնույնը ավելանա, Ձեր նպաստները ավտոմատ կերպով կավելանան հունվար ամսից: Մենք նախապես կհայտնենք Ձեզ Նոր գումարի չափը:
- **Եկամտի տարեկան սահմանափակում:** Եթե Դուք կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եք, կա սահմանափակում, թե որքան գումար կարող եք վաստակել և միևնույն ժամանակ ստանալ Social Security Ձեր բոլոր նպաստները: Հիմնականում այս գումարը փոփոխվում է յուրաքանչյուր տարի: Մենք նախապես կհայտնենք Ձեզ Նոր գումարի չափը: Լրացուցիչ տեղեկությունների համար, ներառյալ 2018թ. սահմանափակումների, տես էջ 9:

### Ինչպես մենք կկապվենք Ձեզ հետ

Սովորաբար մենք նամակ կամ ծանուցում ենք ուղարկում Ձեզ, երբ ցանկանում ենք կապ հաստատել Ձեզ հետ, սակայն երբեմն Social Security ներկայացուցիչը կարող է գալ

Ձեր տուն: Նախքան Ձեր նպաստների մասին խոսելը մեր ներկայացուցիչը ցույց կտա իր նույնականացման քարտը: Եթե երբևիցե կասկածեք, թե արդյոք որևէ մեկը իսկապես ներկայացնում է Social Security, գանգահարեք Social Security գրասենյակ և հարցրեք, թե արդյոք նրանք ուղարկել են մեկին Ձեզ հետ հանդիպելու համար: Հիշեք, Social Security աշխատակիցները երբեք Ձեզանից գումար չեն պահանջի որևէ գործ կատարելու համար:

### my Social Security առցանց հաշիվ

Այժմ Դուք կարող եք ստեղծել անվտանգ my Social Security առցանց հաշիվ: Այն թույլ է տալիս Ձեզ տեսնել Ձեր Social Security Statement (արձանագրություն Ձեր եկամուտները ստուգելու և Ձեր նպաստների նախնական հաշվարկը իմանալու համար: Դուք կարող եք նաև օգտվել Ձեր my Social Security առցանց հաշվից՝ Social Security համարի քարտի փոխարինում ինդրելու համար (տվյալ ծառայությունը հասանելի է որոշ նահանգներում և Կոլումբիայի շրջանում):

Եթե Դուք նպաստներ եք ստանում, Դուք կարող եք նաև՝

- ստանալ Ձեր նպաստների հաստատման նամակ,
- փոխել Ձեր հասցեն և հեռախոսահամարը,
- ինդրել Medicare քարտի փոխարինում,
- ինդրել SSA-1099 կամ SSA-1042S փոխարինում հարկերի սեզոնի համար, կամ
- սկսել կամ փոխել Ձեր ուղղակի ավանդը:

Դուք կարող եք ստեղծել my Social Security հաշիվ, եթե Դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր, ունեք Social Security համար և վավերական ԱՄՆ փոստային հասցե և էլ. հասցե: Հաշիվ ստեղծելու համար այցելեք **[www.socialsecurity.gov/myaccount](http://www.socialsecurity.gov/myaccount)**:

Ձեզ հարկավոր կլինի տրամադրել որոշ անձնական տեղեկություններ Ձեր ինքնությունը հաստատելու համար: Ձեզ կխնդրեն ընտրել օգտանուն և գաղտնաբառ, որից հետո կխնդրեն մուտքագրել Ձեր էլ.

հասցեն: Դուք պետք է ընտրեք, թե ինչպես եք ցանկանում ստանալ մեկանգամյա անվտանգության կոդը՝ տեքստային հաղորդագրություն՝ բջջային հեռախոսով կամ գրանցված էլ. հասցեով, որը Դուք պետք է մուտքագրեք Ձեր հաշիվը ստեղծելու համար: Յուրաքանչյուր անգամ, երբ Դուք գրանցվում եք Ձեր օգտանունով և գաղտնաբառով, մենք կուղարկենք Ձեզ մեկանգամյա անվտանգության կոդ Ձեր բջջային հեռախոսին կամ Ձեր էլ. հասցեին: Այս անվտանգության կոդը մեր ուժեղացված անվտանգության միջոցառումներից է՝ Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար: Հիշեք, որ կարող են կիրառվել Ձեր բջջային կապի մատակարարի տեքստային հաղորդագրության և տվյալների սակագները:

### Ինչ պետք է հաղորդեք մեզ

#### Ձեր պարտականությունները

Հնարավորինս արագ տեղեկացրեք մեզ, եթե բ այս բաժնում թվարկված փոփոխություններից մեկը տեղի ունենա:

**ՑԱՆՈՒՑՈՒՄ.** Փոփոխության մասին չհայտնելը կարող է հանգեցնել հավելավճարի: Եթե Դուք հավելավճար եք ստացել, մենք հետ կվերցնենք այն բոլոր գումարները, որոնք Ձեզ համար չեն նախատեսված: Բացի այդ, եթե Դուք ժամանակին մեզ չտեղեկացնեք փոփոխությունների մասին, կամ եթե միտումնավոր սուտ հայտարարություն անեք, մենք կարող ենք դադարեցնել Ձեր նպաստները: Առաջին խախտման համար Ձեր նպաստները կդադարեցվեն 6 ամսով, երկրորդ խախտման համար՝ 12 ամսով և երրորդ խախտման համար՝ 24 ամսով:

Հայտարարություն անելու համար Դուք կարող եք զանգահարել, գրել կամ այցելել մեզ: Ձեզ մոտ ունեցեք Ձեր պահանջի համարը: Եթե Դուք նպաստներ եք ստանում Ձեր աշխատանքային պատմության հիման վրա, Ձեր պահանջի համարն ու Ձեր Social Security համարը նույնը կլինեն: Եթե Դուք նպաստներ եք ստանում մեկ ուրիշի

աշխատանքային պատմության հիման վրա, Ձեր պահանջի համարը կլինի այն, ինչը կարող եք գտնել նպաստների վերաբերյալ Ձեզ ուղարկված որևէ նամակի վրա:

Մեկ այլ պետական գործակալություն կարող է Social Security հայտնել Ձեր կողմից իրենց հայտնած տեղեկությունները, սակայն Դուք նույնպես պետք է փոփոխությունների մասին հայտնեք մեզ:

### **Եթե Ձեր գնահատված եկամուտը փոփոխվի**

Եթե Դուք աշխատում եք, մենք հիմնականում խնդրում ենք Ձեզ հաշվարկել տարվա ընթացքում Ձեր ակնկալվող եկամուտը: Եթե հետագայում Ձեր եկամուտը ավելի ցածր կամ բարձր լինի հաշվարկային գումարից, հնարավորինս շուտ տեղեկացրեք մեզ, և մենք կկարողանանք ուղղումներ կատարել Ձեր նպաստներում: Ճշգրիտ հաշվարկներ կատարելու հարցում օգնության համար տե՛ս “Working and getting Social Security at the same time”, (Աշխատել և ստանալ սոցիալական ապահովություն միաժամանակ) էջ 9.

### **Եթե Դուք տեղափոխվեք**

Եթե պատրաստվում եք տեղափոխվել, , հնարավորինս շուտ հայտնեք մեզ Ձեր նոր հասցեն և հեռախոսահամարը: Անգամ եթե նպաստները ստանում եք ուղղակի ավանդի միջոցով, Social Security-ն պետք է ունենա Ձեր ներկայիս հասցեն, որպեսզի կարողանա նամակներ և այլ կարևոր տեղեկություններ ուղարկել Ձեզ: Մենք կդադարեցնենք Ձեր նպաստների վճարումը, եթե չկարողանանք կապ հաստատել Ձեզ հետ: Դուք կարող եք փոխել Ձեր հասցեն մեր կայքի միջոցով՝ բացելով *my Social Security* հաշիվ: Կամ կարող եք զանգահարել **1-800-772-1213** հեռախոսահամարով և օգտվել մեր ավտոմատացված համակարգից:

Եթե նպաստ ստացող ընտանիքի որևէ անդամ տեղափոխվում է Ձեզ մոտ, խնդրում ենք հայտնել նրանց անունները: Անպայման Ձեր փոստային բաժանմունքին ներկայացրեք հասցեի փոփոխության ծանուցում:

### **Եթե Դուք փոխեք ուղղակի ավանդի հաշիվները**

Եթե Դուք փոխեք ֆինանսական հաստատությունները կամ նոր հաշիվ բացեք, Դուք կարող եք առցանց փոխել Ձեր ուղղակի ավանդը, եթե ունեք *my Social Security* հաշիվ: Կամ մենք կարող ենք փոխել Ձեր ուղղակի ավանդի տեղեկությունները հեռախոսով՝ ձեր ինքնությունը հաստատելուց հետո: Չանգահարելիս՝ Ձեզ մոտ ունեցեք Ձեր հին և նոր բանկային հաշվեհամարները: Այս համարները տպված են Ձեր անձնական ստացականների/կտրոնների կամ բանկային հայտարարությունների վրա: Այս տեղեկության փոփոխության համար անհրաժեշտ է 30-60 օր: Մի փակեք Ձեր հին հաշիվը մինչև չհամոզվեք, որ Ձեր Social Security-ի նպաստները ավանդադրվում են Ձեր նոր հաշվին:

### **Եթե անձը ի վիճակի չէ կառավարել դրամական միջոցները**

Երբեմն անձը չի կարող կառավարել իր սեփական դրամական միջոցները: Եթե նման դեպք գրանցվի, որևէ մեկը պետք է տեղեկացնի մեզ այդ մասին: Մենք կարող ենք հետևել, որ նպաստներն ուղարկվեն բարեկամին կամ այլ անձին կամ կազմակերպությանը, որը կհամաձայնվի օգտագործել այդ գումարները նպաստառուի բարեկեցության նպատակով: Մենք այդ անձին կամ կազմակերպությանը անվանում ենք «նպաստ ստացողի ներկայացուցիչ»:  
Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *A Guide for Representative Payees* (Publication No. 05-10076), (Ուղեցույց վճարվողի ներկայացուցիչների համար, հրատարակություն No. 05-10076)

**ՇԱՆՈՒՅՈՒՄ.** Անձինք, որոնք որևէ մեկի համար հանդիսանում են «օրինական խնամակա» կամ «լիազոր ներկայացուցիչ» ավտոմատ կերպով չեն որակավորվում որպես նպաստ ստացողի ներկայացուցիչ:

**Եթե Դուք կենսաթոշակ եք ստանում չապահովագրված աշխատանքից**

Դուք պետք է հայտնեք մեզ, եթե սկսել եք ստանալ տարիքային կամ հաշմանդամության թոշակ մի աշխատանքից, որի համար Դուք Social Security հարկեր չեք վճարել, օրինակ՝ Federal Civil Service Retirement System-ից (Դաշնային քաղաքացիական ծառայությունների թոշակային համակարգ) կամ որոշ նահանգային և տեղական թոշակային համակարգերից: Հնարավոր է, որ Ձեր Social Security նպաստներն անհրաժեշտ լինի վերահաշվարկել, և դրանք կարող են նվազել: Բացի այդ, տեղեկացրեք մեզ, եթե Ձեր թոշակի գումարը փոփոխվի:

**Եթե ամուսնանաք կամ ամուսնալուծվեք**

Եթե ամուսնանաք կամ ամուսնալուծվեք, դա կարող է ազդել Ձեր Social Security նպաստների վրա՝ կախված Ձեր կողմից ստացվող նպաստների տեսակից:

Եթե մենք դադարեցնենք Ձեր նպաստների վճարումը ամուսնության կամ վերա-ամուսնության պատճառով, մենք կարող ենք դրանք վերսկսել, եթե ամուսնությունն ավարտվի:

Ստորև ներկայացված աղյուսակը ներառում է օրինակներ.

Եթե Դուք ստանում եք՝	Ապա՝
Ձեր սեփական թոշակի նպաստներ	Ձեր նպաստները կշարունակվեն:
Ամուսնու/կնոջ նպաստներ	Ձեր նպաստները կշարունակվեն, եթե ամուսնալուծված եք և 62 տարեկան եք կամ ավելի բարձր, բացառությամբ, եթե ամուսնացած էիք 10 տարուց պակաս:
Այրի կնոջ կամ տղամարդու նպաստներ	Ձեր նպաստները կշարունակվեն, եթե կրկին ամուսնանաք 60 տարեկանում կամ ավելի մեծ տարիքում: Եթե 50-59 տարեկան եք և հաշմանդամ եք, Ձեր նպաստները կշարունակվեն:
Նպաստների որևէ այլ տեսակ	Ընդհանուր առմամբ, Ձեր նպաստները կդադարեցվեն, երբ ամուսնանաք: Ձեր նպաստները կարող են վերսկսվել, եթե ամուսնությունը դադարեցվի:

**Եթե Դուք փոխեք Ձեր անունը**

Եթե Դուք փոխեք Ձեր անունը ամուսնության, ամուսնալուծության կամ դատարանի որոշման հետևանքով, Դուք պետք է անմիջապես տեղեկացնեք մեզ: Եթե Դուք մեզ տեղեկություններ չտրամադրեք, Ձեր նպաստները կվճարվեն Ձեր հին անունով և, եթե ուղղակի ավանդ ունեք, վճարումները չեն հասնի Ձեր հաշվին:

## **Եթե Դուք նպաստներ եք ստանում, քանզի երեխայի եք խնամում**

Եթե Դուք նպաստներ եք ստանում, քանզի 16 տարեկանից ցածր կամ հաշմանդամ երեխա եք խնամում, Դուք պետք է անմիջապես տեղեկացնեք մեզ, եթե երեխան այլևս Ձեր խնամքի տակ չէ կամ նա փոխում է բնակության հասցեն: Փոխանցեք մեզ այն անձի անունն ու հասցեն, ում հետ երեխան ներկայումս ապրում է:

Ժամանակավոր բաժանումը կարող է չազդել Ձեր նպաստների վրա, եթե Դուք շարունակեք ծնողական վերահսկողությունն իրականացնել երեխայի նկատմամբ, սակայն Ձեր նպաստները կդադարեցվեն, եթե Դուք այլևս պատասխանատու չլինեք երեխայի հանդեպ: Եթե երեխան վերադառնա Ձեր խնամքի ներքո, մենք կվերսկսենք ուղարկել Ձեզ նպաստները:

Ձեր նպաստները կդադարեցվեն, երբ Ձեր խնամքի տակ գտնվող ամենափոքր չամուսնացած երեխան դառնա 16 տարեկան, բացառությամբ, եթե երեխան հաշմանդամ է: Ձեր երեխայի նպաստները կարող են շարունակվել, ինչպես բացատրված է 12 էջերում:

## **Եթե որևէ մեկը որդեգրում է նպաստներ ստացող երեխայի**

Երբ նպաստներ ստացող երեխան որդեգրվում է, տեղեկացրեք մեզ երեխայի նոր անունը, որդեգրման որոշման ամսաթիվը և որդեգրող ծնողների անուններն ու հասցեն: Որդեգրումը չի հանգեցնի նպաստների դադարեցման:

## **Եթե Դուք ծնող դառնաք այն բանից հետո, երբ սկսել եք ստանալ նպաստներ**

Եթե Դուք երեխայի ծնող դառնաք (ներառյալ որդեգրված երեխայի), այն բանից հետո, երբ սկսել եք նպաստներ ստանալ, տեղեկացրեք մեզ, որպեսզի մենք որոշենք, թե արդյոք երեխան իրավունակ է նպաստների համար:

## **Եթե Դուք ունեք չկատարված քրեական հանցագործության կամ ձերբակալման հրաման**

Դուք պետք է տեղեկացնեք մեզ, եթե Դուք ունեք չկատարված քրեական հանցագործության կամ ձերբակալման հրաման հետևյալ որևէ հանցագործության համար՝

- Փախուստ՝ դատական կարգով հետապնդումից կամ ազատագրվումից խուսափելու համար,
- Փախուստ բանտարկությունից, և
- Փախուստ-ազատում:

Դուք չեք կարող ստանալ սովորական թոշակային, ժառանգի, հաշմանդամի նպաստներ կամ որևէ այլ թերապիա, որը Ձեզ պարտք են, որևէ ամսվա համար, երբ կա չկատարված քրեական հանցագործության կամ ձերբակալման հրաման:

## **Եթե Դուք դատապարտված եք քրեական հանցագործության համար**

Եթե Դուք ստանում եք Social Security նպաստներ և դատապարտվել եք հանցագործության համար և 30 շարունակական օրվանից ավել անցկացրել եք ուղղիչ հաստատությունում, անմիջապես տեղեկացրեք Social Security-ին: Հիմնականում նպաստներ չեն վճարվում այն ամիսների համար, որի ընթացքում անձը բանտարկված է, սակայն այլ իրավունակ ընտանիքի անդամները կարող են շարունակել նպաստներ ստանալը:

## **Եթե Դուք հանցագործություն եք կատարել և գտնվում եք անազատության մեջ**

Հիմնականում նպաստներ չեն վճարվում այն անձանց, որոնք հանցագործություն են կատարել և գտնվում են անազատության մեջ դատարանի որոշմամբ և հանրային ծախսերով ավելի քան 30 շարունակական օրվա ընթացքում: Սա կիրառվում է, եթե անձը համարվել է՝

- Մեղավոր, սակայն հոգեկան հիվանդ, կամ
- Անմեղ՝ հոգեկան հիվանդության կամ նմանատիպ գործոնների հետևանքով (ինչպիսիք են՝ հոգեկան հիվանդությունը, հոգեկան դեֆեկտը կամ հոգեկան անկարողությունը), կամ
- Անկարող է պատժի ենթարկվել, կամ
- Սեռական հարցով վտանգավոր է:

## Եթե Դուք հեռանաք Միացյալ Նահանգներից

Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի եք, Դուք կարող եք ճամփորդել կամ ապրել արտասահմանյան երկրներից մեծ մասում՝ առանց Ձեր Social Security նպաստների վրա ազդեցության: Սակայն կան մի քանի երկրներ, ուր մենք չենք կարող ուղարկել Social Security վճարներ: Այս երկրներն են՝ Azerbaijan, Belarus, Cuba, Kazakhstan, Kyrgyzstan, Moldova, North Korea, Tajikistan, Turkmenistan, Ukraine և Uzbekistan: Սակայն, մենք կարող են բացառություններ կատարել որոշ իրավունակ նպաստառուների համար՝ Կուբայից և Հյուսիսային Կորեայից բացի այլ երկրների համար: Այս բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք Ձեր տեղական Social Security գրասենյակի հետ:

Տեղեկացրեք մեզ, եթե պատրաստվում եք ճամփորդել United States դուրս 30 կամ ավելի օր: Տեղեկացրեք մեզ երկրի կամ երկրների անունը, ուր նախատեսում եք գնալ, և օրը, երբ ակնկալում եք լքել United States: Մենք կուղարկենք Ձեզ հատուկ տեղեկացման հրահանգներ և կասենք, թե ինչպես կազմակերպել Ձեր նպաստները, մինչ Դուք արտերկրում եք: Անպայման տեղեկացրեք մեզ, երբ վերադառնաք United States:

Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք և վերադառնում եք ապրելու United States Նահանգներում, Դուք պետք է տրամադրեք Ձեր ոչ-քաղաքացու կարգավիճակի ապացույց՝ նպաստներ ստանալը շարունակելու համար: Եթե Դուք աշխատեք

Միացյալ Նահանգներից դուրս, կկիրառվեն այլ կանոններ որոշելու համար, թե արդյոք Դուք կարող եք նպաստներ ստանալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Your Payments While You are Outside the United States* (Publication No. 05-10137), *Ձեր վճարումները՝ ԱՄՆ-ից դուրս գտնվելու ընթացքում* (Հրատարակություն No. 05-10137):

## Եթե Ձեր քաղաքացիության կարգավիճակը փոփոխվի

Եթե Դուք քաղաքացի չեք, տեղեկացրեք մեզ, եթե դառնաք ԱՄՆ քաղաքացի կամ եթե Ձեր ոչ-քաղաքացու կարգավիճակը փոփոխվի: Եթե Ձեր ներգաղթյալի կարգավիճակի ժամկետը լրանա, Դուք պետք է մեզ նոր ապացույցներ ներկայացնեք, որոնք ցույց կտան, որ Դուք շարունակում եք օրենքով մնալ United States և:

## Եթե նպաստառուն մահանում է

Տեղեկացրեք մեզ, եթե Social Security նպաստներ ստացող անձը մահանում է: Մենք չենք կարող նպաստներ վճարել մահվան ամսվա համար: Սա նշանակում է, որ, եթե անձը մահացել է հուլիս ամսին, օգոստոս ամսին ստացված չեկը պետք է վերադարձվի (որը հուլիս ամսվա վճարումն է): Եթե վճարումը կատարվում է ուղղակի ավանդի միջոցով, հնարավորինս շուտ տեղեկացրեք ֆինանսական հաստատությանը, որպեսզի այն կարողանա վերադարձնել մահվանից հետո ստացված որևէ վճարում:

Ընտանիքի անդամները կարող են իրավունակ լինել Social Security ժառանգորդի նպաստների համար, երբ նպաստառուն մահանում է:



## Եթե Դուք ստանում եք Social Security և Railroad Retirement նպաստներ

Եթե Դուք ստանում եք և՛ Social Security, և՛ Railroad Retirement նպաստներ՝ Ձեր ամուսնու/կնոջ աշխատանքի հիման վրա, և Ձեր ամուսինը/կինը մահանա, Դուք պետք է անմիջապես տեղեկացնեք մեզ: Դուք այլևս իրավունակ չեք լինի երկու նպաստներ ստանալու համար: Ձեզ կտեղեկացնեն, թե ժառանգորդի որ նպաստն եք ստանալու:

## Միևնույն ժամանակ աշխատելը և Social Security ստանալը

### Ինչպես են եկամուտներն ազդում Ձեր նպաստների վրա

Դուք կարող եք շարունակել աշխատել և դեռևս ստանալ Social Security կենսաթոշակային նպաստներ: Թոշակային տարիքին հասնելու ամսվա (և դրանից հետոյի) եկամուտները չեն ազդելու Ձեր Social Security նպաստների վրա: Սակայն, մենք կկրճատենք Ձեր նպաստները, եթե Ձեր եկամուտները գերազանցեն որոշակի սահմանները կենսաթոշակային տարիքին հասնելուն նախորդող ամիսների համար: (Կենսաթոշակային տարիքն է 66 տարեկան և 4 ամսական 1956թ. ծնված անձանց համար, և աստիճանաբար աճում է մինչև 67՝ 1960թ. և դրանից հետո ծնված անձանց համար): Կենսաթոշակային տարիքն իմանալու համար կարող եք այցելել [www.socialsecurity.gov/planners/retire/ageincrease.html](http://www.socialsecurity.gov/planners/retire/ageincrease.html) կայքը:

- Եթե Դուք կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, մենք նպաստից կկրճատենք \$1 տարեկան սահմանափակումը գերազանցող յուրաքանչյուր \$2-ի համար (\$17,040՝ 2018թ.-ին):
- Այն տարին, երբ Դուք հասնեք Ձեր կենսաթոշակային տարիքին, մենք նպաստից կկրճատենք \$1 մեկ այլ տարեկան սահմանափակումը գերազանցող յուրաքանչյուր \$3-ի համար

(\$45,360՝ 2018թ.-ին) մինչև այն ամիսը, երբ Դուք հասնեք Ձեր կենսաթոշակային տարիքին: Դրանից հետո Դուք ամբողջությամբ կստանաք Ձեր Social Security նպաստների վճարումներն՝ անկախ Ձեր վաստակած գումարի չափից:

Եթե Դուք կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, և Ձեր որոշ նպաստները պահվել են, քանզի Ձեր եկամուտը գերազանցել է \$17,040, մենք լավ լուր ունենք հայտնելու: Կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո գրեթե մեկ տարի մենք կվերահաշվարկենք և կավելացնենք Ձեր նպաստները՝ հաշվի առնելով այն ամիսները, երբ Դուք նպաստ չէիք ստանում կամ ստանում էիք կրճատված նպաստներ:

Բացի այդ, Social Security գրանցվելուց հետո վաստակած որևէ եկամուտ կարող է ավելացնել Ձեր ընդհանուր միջին եկամուտը, և, հնարավոր է, որ Ձեր նպաստը ավելանա:

Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10069-AM) *How Work Affects Your Benefits* (Հրատարակություն No. 05-10069), Ինչպես է աշխատանքն ազդում Ձեր նպաստների վրա:

### Հատուկ ամսական կանոն

Երբեմն մարդիկ, որոնք թոշակի են անցնում տարվա կեսից, արդեն վաստակած են լինում տարեկան եկամուտի սահմանափակումից ավելին: Այդ իսկ պատճառով, հատուկ ամսական կանոնը կիրառվում է մեկ տարվա եկամուտների վրա, հիմնականում, կենսաթոշակի անցնելու առաջին տարվա համար: Այս կանոնի համաձայն, Դուք կարող եք ամբողջությամբ ստանալ Social Security նպաստները որևէ ամբողջական ամսվա համար, երբ վաստակել եք որոշակի սահմանափակումից պակաս՝ անկախ Ձեր տարեկան եկամտի չափից:

2018թ.-ին մենք կենսաթոշակային տարիքից (66 տարեկան և 4 ամսական 1956թ. ծնվածների համար) ցածր տարիքի անձին համարում ենք թոշակի անցած,

Եթե ամսական եկամուտը կազմում է \$1,420 կամ պակաս: Օրինակ՝ Ջոն Սմիթը թոշակի է անցել 62 տարեկանում 2018թ. օգոստոսի 30-ին: Մինչև օգոստոս ամիսը նա վաստակել է \$45,000: Նա կես դրույքով աշխատանք է սկսում սեպտեմբերին՝ \$500 ամսական աշխատավարձով: Չնայած որ իր տարեկան եկամուտը բավականին գերազանցում է 2018թ. սահմանափակումը (\$17,040), նա Social Security վճարում կստանա սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսները: Դրա պատճառն այն է, որ այն ամիսների ընթացքում իր եկամուտը ավելի պակաս է, քան \$1,420՝ «կենսաթոշակային առաջին տարվա» ամսական հատուկ սահմանափակումը՝ կենսաթոշակային տարիքից երիտասարդ անձանց համար: Եթե այս ամիսներից որևէ մեկի ընթացքում (սեպտեմբերից մինչև դեկտեմբեր) պր-ն Սմիթը վաստակի ավելի քան \$1,420, նա նպաստ չի ստանա այդ ամսվա համար:

2019թ.-ից սկսած՝ միայն տարեկան սահմանափակումները կկիրառվեն նրա վրա, քանզի նա անցած կլինի իր թոշակի անցնելու առաջին տարին, և արդեն օգտագործած կլինի այդ տարվա հատուկ ամսական կանոնը:

Եթե Դուք ինքնազբաղ եք, մենք այդ ամսական սահմանափակման հիմք կընդունենք, թե արդյոք Դուք բավականին ծառայություններ եք մատուցել Ձեր բիզնեսի մեջ: Ընդհանուր առմամբ, ինքնազբաղվածության դեպքում, եթե Դուք ամսական 45 ժամից ավել եք աշխատում, Դուք այդ ամսվա համար նպաստներ չեք ստանա:

### **Եթե Դուք աշխատավարձ եք ստանում**

Աշխատավարձերը հաշվարկվում են՝ հաշվի առնելով եկամտի սահմանափակումները, երբ դրանք վաստակվում են, և ոչ թե՛ վճարվում: Եթե Ձեր եկամուտը վաստակել եք մեկ տարում, սակայն վճարումը հետաձգվել է հաջորդ տարի, այդ եկամուտները չեն հաշվարկվի Ձեր ստացված տարվա համար: Հետաձգված եկամուտի որոշ օրինակներ

ներառում են կուտակված հիվանդության օրերը կամ արձակուրդային վճարները, բոնուսները, բաժնետոմսերի տարբերակները և այլ հետաձգված փոխհատուցումներ: Եթե Դուք աշխատավարձ եք ստանում մեկ տարվա ընթացքում մի աշխատանքի համար, որը Դուք կատարել եք նախորդ տարի, Դուք պետք է կապվեք մեզ հետ:

Մենք պայմանավորվածություն ունենք Internal Revenue Service-ի հետ, որպեսզի աշխատակիցները կարողանան հայտնել որոշ տեսակի հետաձգված փոխհատուցումների վերաբերյալ Ձևաթուղթ W-2-ում: Այս գումարները գրվում են « Չորակավորված պլաններ » վանդակում: Մենք կհանենք այդ վանդակում նշված գումարը Ձեր ընդհանուր եկամտից՝ որոշելու համար, թե որ գումարն ենք հաշվարկում տվյալ տարվա համար:

### **Եթե Դուք ինքնազբաղված եք**

Եթե Դուք ինքնազբաղված եք, եկամուտը հաշվարկվում է, երբ Դուք այն ստանում եք, և ոչ թե՛ վաստակում, բացի դեպքերից, եթե այն վճարվում է Social Security-ի համար իրավասու դառնալուն հաջորդող տարում և վաստակված է նախքան Social Security-ի համար իրավասու դառնալը: Օրինակ, եթե Դուք սկսել եք ստանալ Social Security 2017թ. հունիսին և որոշ գումար ստանաք 2018թ. փետրվարին՝ 2017թ. հունիսից առաջ կատարված աշխատանքի համար, այն չի հաշվարկվի Ձեր 2018թ. եկամտի սահմանափակման համար: Եթե 2018թ. փետրվարին ստացված գումարը 2017թ. հունիսից առաջ կատարված աշխատանքի համար է, սակայն այն կհաշվարկվի Ձեր 2018թ. եկամուտի սահմանափակման հաշվին:

### **Ձեր եկամուտների մասին հայտնելը**

Քանի որ Ձեր եկամուտները կարող են ազդել Ձեր Social Security նպաստների վրա, մենք պետք է իմանանք, թե որքան եկամուտ եք ստացել տարվա ընթացքում: Հիմնականում մենք տեղեկությունները ստանում ենք՝

- Ձեր շահած գումարից, որը Ձեր գործատունն հայտնում է Ձեր W-2-ի մեջ, և
- Ձեր ինքնազբաղության եկամուտների հայտարարությունից՝ Ձեր եկամտահարկի հայտարարության մեջ:

Ձեզ անհրաժեշտ է մեզ հայտնել Ձեր եկամուտները տարվա ավարտից հետո միայն եթե՝

- Դուք իրավունակ եք հատուկ ամսական կանոնի համար (տես էջեր 9) և Դուք չափել եք ամսական սահմանափակումից պակաս գումար (եթե այդպես է, տեղեկացրեք մեզ, որպեսզի այդ ամիս մենք Ձեզ նպաստ վճարենք),
- Ձեր W-2 ցույց տրված որոշ կամ բոլոր եկամուտները վաստակված չեն հայտարարագրի տարվա ընթացքում,
- Ձեր աշխատավարձը գերազանցում է սահմանափակումը, և, բացի այդ, Դուք զուտ կորուստ ունեք ինքնազբաղվածության մեջ:
- Ձեր W-2 ցույց է տալիս գործատուի կողմից հայտարարված աշխատավարձեր, որոնք Դուք կներառեք ինքնազբաղվածության եկամտահարկի հայտարարագրում (օրինակ՝ քահանաներ),
- Դուք ներկայացրել եք ինքնազբաղվածության եկամտահարկի հայտարարագիր, սակայն որևէ ծառայություն չեք մատուցել Ձեր բիզնեսով կամ Դուք եկամտահարկի հայտարարագիր եք ներկայացնում ֆիսկալ տարով:
- Դուք ֆերմեր եք և ստանում եք դաշնային գյուղատնտեսական ծրագրի վճարների կամ եկամուտ ունեք փոխանցվող մշակաբույսերից, կամ
- Մենք հետ ենք պահել որոշ նպաստներ, սակայն տարվա համար Դուք եկամուտ չեք ստացել կամ Ձեր եկամուտները պակաս են, քան Դուք մեզ տեղեկացրել էիք:

Եթե մենք պետք է կարգավորենք Ձեր նպաստի գումարը՝ հիմնվելով Ձեր հայտարարագրի վրա, մենք Ձեզ կտեղեկացնենք այդ մասին: Տեղեկությունների ուսումնասիրությունը կարևոր է: Ստավորապես տարվա կեսին մենք հնարավոր է, որ Ձեզ նամակ ուղարկենք խնդրելով գնահատել Ձեր ներկայիս և հաջորդ տարվա եկամուտները: Ձեր գնահատումները կօգնեն մեզ խուսափել նպաստների գերավճարից կամ թերավճարից:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.** Եթե Դուք ստանում եք Supplemental Security Income (SSI) վճարներ՝ ի հավելումն Social Security նպաստների, Դուք պետք է հայտնեք Ձեր բոլոր եկամուտների մասին:

## Ձեր եկամուտների հաշվարկը և Ձեր նպաստները

Այս տարի մենք ճշգրտել ենք Ձեր նպաստները՝ հիմնվելով Ձեր եկամուտների վրա, որ Դուք ակնկալում էիք ստանալ այս տարի:

Եթե ընտանիքի այլ անդամներ նպաստներ են ստանում Ձեր գրառումների հիման վրա, Ձեր եկամուտները կարող են ազդել ընտանիքի ընդհանուր նպաստների վրա: Սակայն, եթե Դուք նպաստներ եք ստանում որպես ընտանիքի անդամ, Ձեր եկամուտները ազդում են միայն Ձեր նպաստների վրա:

## Ձեր եկամուտների հաշվարկի ուղղումը

Երբ Դուք աշխատում եք, Դուք պետք է պահեք Ձեր վճարման անդորրագրերը: Եթե տարվա ընթացքում Դուք տեսնեք, որ Ձեր եկամուտները կտարբերվեն Ձեր նախնական հաշվարկից, Դուք պետք է զանգահարեք մեզ հաշվարկը ուղղելու համար: Սա կօգնի մեզ վճարել Social Security նպաստի ճիշտ գումար:

## Այլ կարևոր տեղեկություններ

### Կենսաթոշակային նպաստներ այրի կանանց և տղամարդկանց համար

Դուք կարող եք տեղափոխվել կենսաթոշակային նպաստների՝ հիմնված Ձեր սեփական աշխատանքի վրա, եթե դրանք ավելի մեծ են, քան Դուք ստանում եք Ձեր մահացած ամուսնու/կնոջ աշխատանքից: Այս նպաստները կարող են ավելի բարձր լինել անգամ 62 տարեկանում կամ հնարավոր է, մինչև 70 տարեկանը: Կանոնները շատ բարդ են և ամբողջովին կախված են Ձեր իրավիճակից: Եթե Դուք դեռ չեք խոսել Social Security ներկայացուցչի հետ Ձեր կենսաթոշակային նպաստների վերաբերյալ (կամ Ձեր իրավիճակը փոփոխվել է), կապվեք Ձեր տեղական Social Security գրասենյակի հետ և քննարկեք Ձեզ հասանելի տարբերակները:

### Նպաստներ երեխաների համար

Եթե երեխան նպաստներ է ստանում Ձեր աշխատանքի հիման վրա, ահա այն կարևոր բաները, որ Դուք պետք է իմանաք նրա նպաստների մասին՝

#### • Երբ երեխան դառնում է 18 տարեկան

- Երեխայի նպաստները դադարում են 18 տարեկան դառնալու նախորդող ամսին, բացառությամբ, եթե երեխան հաշմանդամ է կամ տարրական կամ միջին դպրոցում լրիվ դրույքով աշակերտ է:
- Երեխայի 18-րդ տարեդարձից մոտ հինգ ամիս առաջ, երեխայի նպաստ ստացող անձը կստանա ձևաթուղթ, որտեղ կբացատրվի, թե ինչպես կարող են նպաստները շարունակվել:
- Երեխան, ում նպաստները դադարել են 18 տարեկանում, կարող է որևէ տարիքում կրկին դրանք ստանալ, եթե նա հաշմանդամություն ունի, որը սկսվել է նախքան 22 տարեկանը և որը կհամապատասխանի այս վճարումների այլ չափանիշներին: Նպաստները

կարող են վերսկսվել նաև, եթե երեխան նախքան 19 տարեկան հասակը դառնա տարրական կամ միջնակարգ դպրոցի լրիվ դրույքով աշակերտ:

#### • Եթե աշակերտը հաշմանդամ է

- 18 տարեկանում երեխան կարող է շարունակել ստանալ նպաստներ, եթե նա հաշմանդամություն ունի: Երեխան կարող է նաև որակավորվել SSI հաշմանդամության վճարումների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք մեզ:

#### • Եթե 18 տարեկան երեխան ուսանող է

- Երեխան կարող է նպաստներ ստանալ մինչև 19 տարեկանը, եթե նա շարունակի լինել տարրական կամ միջնակարգ դպրոցի լրիվ դրույքով աշակերտ: Երբ Ձեր երեխայի 19-րդ տարեդարձը տեղի ունենա ուսումնական տարվա ընթացքում, նրա նպաստները կարող են շարունակվել, մինչև ժամկետի ավարտը կամ 19-րդ տարեդարձին հաջորդող երկու ամսվա ընթացքում, որը որ ավելի վաղ տեղի ունենա:
- Անմիջապես տեղեկացրեք Social Security-ին, եթե երեխան հեռանա դպրոցից, փոխի կարգավիճակը լրիվ դրույքից կես դրույքովի, մշտական կամ ժամանակավոր հեռացվի կամ փոխի դպրոցը: Տեղեկացրեք մեզ նաև, եթե Ձեր երեխայի գործատուն վճարում է դպրոց հաճախելու համար:
- Մենք յուրաքանչյուր երեխայի ձևաթուղթ ենք տալիս ուսումնական տարվա սկզբին և ավարտին: Կարևոր է լրացնել և մեզ ուղարկել ձևաթուղթը: Մենք կարող ենք դադարեցնել նպաստները, եթե մենք չստանանք ձևաթղթերը:
- Ուսանողները կարող են շարունակել նպաստների ստացումը չորս ամիս կամ պակաս արձակուրդային ժամանակահատվածում, եթե

արձակուրդի վերջում նրանք պատրաստվում են վերադառնալ դպրոց ամբողջ դրույքով:

- Ուսանողը, որը դադարել է հաճախելը, կարող է վերսկսել նպաստները, եթե մինչև 19 տարեկանը վերադառնա դպրոց ամբողջ դրույքով: Ուսանողը պետք է կապվի մեզ հետ և վերստին դիմի նպաստների համար:

**Ծանոթություն.** *Երեխան, որն այլևս ուսանող չէ, կարող է նպաստների ստանալու հնարավորություն ունենալ, եթե նա հաշմանդամություն ունի, որը սկսվել է մինչև 22 տարեկանը: Երեխան կարող է նաև որակավորվել SSI հաշմանդամության վճարումների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարեք մեզ:*

**• Ինչպես է ամուսնալուծությունն ազդում խորթ երեխայի նպաստների վրա**

- Եթե խորթ երեխան նպաստներ է ստանում Ձեր աշխատանքի հիման վրա, և Դուք ու երեխայի ծնողը ամուսնալուծվեք, խորթ երեխայի նպաստը կավարտվի ամուսնալուծությունը վերջնական դառնալու ամսի վերջին: Դուք պետք է տեղեկացնեք մեզ անմիջապես, երբ ամուսնալուծությունը դառնա վերջնական:

**Supplemental Nutrition Assistance Program (SNAP), (Հավելյալ սննդային աջակցության ծրագիր)**

Դուք կարող եք ունելիքի համար օգնություն ստանալ Supplemental Nutrition Assistance Program (SNAP)-ի միջոցով, որը նախկինում հայտնի էր ունելիքի կտրոններ անունով: Որպեսզի իմանաք, թե ինչպես պետք է դիմեք, այցելեք [www.fns.usda.gov/snap](http://www.fns.usda.gov/snap) կայքը: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10101-AM) *Supplemental Nutrition Assistance Program Facts*, (Հրատարակություն No. 05-10101), Փաստեր հավելյալ սննդային աջակցության ծրագրի մասին: Ձեզ հասանելի այլ սննդային

ծրագրերի մասին տեղեկությունների համար ընթերցեք (Publication No. 05-10100) *Nutrition Assistance Programs*, (Հրատարակություն No. 05-10100), Սննդային աջակցության ծրագրեր: Երկու հրապարակումները հասանելի են [www.socialsecurity.gov/pubs](http://www.socialsecurity.gov/pubs) հասցեով:

**Կարո՞ղ եք արդյոք SSI ստանալ:**

Եթե Դուք սահմանափակ եկամուտ և հնարավորություններ ունեք, SSI-ը հնարավոր է, որ կարողանա օգնել Ձեզ: SSI-ը մեր կողմից կառավարվող դաշնային ծրագիր է: Ընդհանուր եկամուտները, և ոչ թե Social Security հարկերն են ֆինանսավորում SSI ծրագիրը:

SSI-ն ամսական չեկեր է վճարում քիչ հնարավորություններ ունեցող 65 և ավելի տարիքի անձանց, որոնք կույր կամ հաշմանդամ են: Եթե Դուք ստանում եք SSI, Դուք կարող եք նաև որակավորվել Medicaid, SNAP և այլ սոցիալական ծառայությունների համար:

SSI-ի համար Ձեր իրավունակությունը որոշելիս՝ մենք չենք հաշվարկում Ձեր եկամուտներից ու հնարավորություններից որոշները: Օրինակ՝ Ձեր տունն ու ավտոմեքենան հիմնականում չեն հաշվարկվում որպես հնարավորություն: Լրացուցիչ տեղեկությունների կամ SSI-ին դիմելու համար գանգահարեք մեզ:

**Եթե Դուք համաձայն չեք մեր կայացրած որոշման հետ**

Եթե որևէ հարց ունեք Ձեր վճարման գումարի կամ մեր կողմից ուղարկված տեղեկության վերաբերյալ, կապվեք մեզ հետ:

Եթե Դուք համաձայն չեք մեր կայացրած որոշման հետ, Դուք իրավունք ունեք խնդրել մեզ վերանայել այն: Ձեր խնդրանքը պետք է լինի գրավոր ձևով և ներկայացվի Social Security գրասենյակ խնդրո առարկա նամակը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում:

Ինչ պետք է իմանաք, երբ ստանում եք Կենսաթոշակային և մահացած թոշակառուներից հետո մնացած ժառանգորդների նպաստներ

Եթե Դուք դեռ բավարարված չեք, գոյություն ունեն լրացուցիչ միջոցներ: Ընթերցեք (Publication No. 05-10058-AM) *Your Right to Question The Decision Made on Your Claim*, (Հրատարակություն No. 05-10058-AM), Ձեր իրավունքը՝ բողոքարկելու Ձեր պահանջի վերաբերյալ կայացված որոշումը:

## **Ներկայացված լինելու Ձեր իրավունքը**

Դուք կարող եք ինքներդ հանդես գալ Ձեր բողոքարկման համար՝ Social Security-ից անվճար օգնությամբ, կամ կարող եք ներկայացուցիչ ունենալ, որ օգնի Ձեզ: Մենք կարող ենք Ձեզ տեղեկություններ տրամադրել այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ ներկայացուցիչ գտնելու հարցում:

Ներկայացուցիչ ընտրելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք *Your Right to Representation* (Publication No. 05-10075-AM), (Հրատարակություն No. 05-10075-AM), Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը:

## **Ձեր անձնական տեղեկությունների պաշտպանությունը**

Դուք պետք է Ձեր Social Security քարտը պահեք ապահով վայրում՝ այլ կարևոր փաստաթղթերի հետ միասին: Այն Ձեզ հետ մի վերցրեք, եթե անհրաժեշտ չէ այն ցույց տալ գործատուին կամ ծառայություն մատուցողին:

Social Security-ն պահում է միլիոնավոր մարդկանց անձնական և գաղտնի տեղեկություններ՝ անուններ Social Security համարներ, եկամտի մասին գրառումներ, տարիքներ, նպաստառուների հասցեներ: Հիմնականում, մենք Ձեր տեղեկությունները քննարկում ենք միայն Ձեզ հետ: Երբ Դուք զանգահարում կամ այցելում եք մեզ, մենք Ձեզ մի քանի հարցեր ենք տալիս, որպեսզի հաստատենք Ձեր ինքնությունը: Եթե ցանկանում եք, որպեսզի մեկ ուրիշը օգնի Ձեզ Social Security գործի հարցում, մեզ

անհրաժեշտ է Ձեր թույլտվությունն այդ անձի հետ Ձեր տեղեկությունները քննարկելու համար:

Մենք հորդորում ենք Ձեզ զգույշ լինել Ձեր Social Security համարի հետ և հնարավորինս պաշտպանել դրա գաղտնիությունը:

Մենք միտված ենք պաշտպանելու Ձեր տեղեկությունների գաղտնիությունը: Երբ օրենքով պահանջվում է, որ մենք տեղեկություններ տրամադրենք այլ պետական գործակալություններին, որոնք կառավարում են առողջապահական և բարեկեցության ծրագրերը, ինչպիսիք են՝ Medicaid և SNAP, այդ գործակալություններին թույլ չի տրվում փոխանցել այս տեղեկություններն այլոց:

## **Մի փոքր Medicare-ի մասին**

Medicare-ը առողջության ապահովության ծրագիր է 65 կամ բարձր տարիքի անձանց համար: Անձինք, որոնք հաշմանդամ են կամ ունեն մշտական երկկամների հիվանդություն կամ amyotrophic lateral sclerosis (Lou Gehrig's disease), (Լու Գերիգի հիվանդություն՝ ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզ), կարող են որևէ տարիքում ստանալ Medicare:

## **Medicare քաղկացած է չորս մասից**

- Medicare, Մաս A (հիվանդանոցային ապահովագրություն). օգնում է վճարել ստացիոնար հիվանդանոցային խնամքի և որոշ հետ-բուժական ծառայությունների համար:
- Medicare, Մաս B (բժշկական ապահովագրություն). օգնում է վճարել բժիշկների ծառայությունների, ամբուլատոր հիվանդանոցային խնամքի կամ այլ բժշկական ծառայությունների համար:
- Medicare, Մաս C (Medicare Advantage ծրագրեր). մատչելի են բազմաթիվ վայրերում: Medicare, Մասեր A և B ունեցող անձինք կարող են ստանալ իրենց առողջապահական խնամքի

բոլոր ծառայությունները այս ապահովագրությունը տրամադրող Medicare-ի կողմից հաստատված մասնավոր ապահովագրական ընկերություններից:

- Medicare, Մաս D (Medicare դեղատոմսով դեղերի ապահովագրություն). օգնում է ապահովագրել դեղատոմսով դեղերի արժեքը:

## **Ո՞վ է իրավունակ Medicare Մաս A-ի համար**

Մարդկանց մեծ մասը ստանում է Մաս A-ն, երբ նրանք դառնում են 65 տարեկան: Դուք ավտոմատ կերպով որակավորվում եք դրա համար, եթե Դուք իրավունակ եք Social Security կամ Railroad Retirement Board նպաստների համար: Կամ Դուք կարող եք որակավորվել Ձեր ամուսնու/կնոջ (ներառյալ ամուսնալուծված ամուսնու/կնոջ) աշխատանքի հիման վրա: Մյուսները որակավորվում են, քանզի նրանք պետական պաշտոնյաներ են, որոնք ապահովագրված չեն Social Security-ի կողմից և վճարել են Medicare հարկ:

Եթե Դուք ստանում եք Social Security հաշմանդամության նպաստներ 24 ամիս շարունակ, Դուք որակավորվում եք Մաս A-ի համար:

Եթե Դուք հաշմանդամության նպաստներ եք ստանում, քանզի ունեք amyotrophic lateral sclerosis (Lou Gehrig's disease), որակավորվելու համար Դուք ստիպված չեք սպասել 24 ամիս:

Բացի այդ, մարդիկ, որոնք պահպանման դիալիզ պահանջող երիկամների մշտական հիվանդություն կամ երիկամների փոխպատվաստում ունեն, որակավորվում են Մաս A-ի համար, եթե նրանք բավական երկար աշխատել են կամ եթե նրանք հանդիսանում են բավական երկար աշխատած անձի ամուսին/կին կամ երեխա:

## **Ո՞վ է իրավունակ Medicare Մաս B-ի համար**

Որևէ անձ, ով իրավունակ է Մաս A-ի համար, կարող է ստանալ Մաս B: Մաս B-ն կամընտիր է և հիմնականում Դուք ապահովագին եք վճարում: 2018թ.-ին ստանդարտ ամսական ապահովագինը կազմում է \$134.00: Ավելի բարձր եկամուտ ունեցողներն ավելի բարձր ապահովագին են վճարում:

## **Ո՞վ կարող է Medicare Մաս C ստանալ**

Որևէ մեկը, ով ունի Medicare Մաս A և Մաս B կարող է անդամակցել Medicare Advantage ծրագրին: Medicare Advantage ծրագրերը ներառում են՝

- Medicare կառավարվող խնամքի ծրագրեր
- Medicare preferred provider organization (PPO), Medicare նախընտրելի մատակարար կազմակերպություն ծրագրեր
- Medicare մասնավոր վճարովի ծառայություններով ծրագրեր
- Medicare մասնագիտացված ծրագրեր

Ի լրումն Ձեր Մաս B ապահովագնի, Դուք կարող է վճարեք մեկ այլ ամսական ապահովագին՝ Medicare Advantage ծրագրի կողմից առաջարկվող լրացուցիչ նպաստների պատճառով:

## **Ո՞վ կարող է Medicare Մաս D ստանալ**

Որևէ մեկը, ով ունի Medicare Մաս A կամ Մաս B, իրավունակ է դեղատոմսով դեղերի ապահովագրության համար: Դեղատոմսով դեղերի ապահովագրությունը կամընտիր է, և Դուք ապահովագրության համար վճարում եք լրացուցիչ ամսական ապահովագին: Ավելի բարձր եկամուտ ունեցողներն ավելի բարձր ապահովագին են վճարում: Շատերը իրենց Մաս D ապահովագրությունը ստանում են Medicare Advantage ծրագրի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար  
ընթերցեք (Publication No. 05-10043-AM)  
Medicare, Հրատարակություն No. 05-10043-AM:

## Ե՞րբ է հարկավոր դիմել Medicare-ի համար:

Եթե Դուք դեռևս նպաստներ չեք ստանում, Դուք պետք է կապվեք Social Security-ի հետ Ձեր 65-րդ տարեդարձից մոտ երեք ամիս առաջ, որպեսզի գրանցվեք Medicare-ի համար: Դուք պետք է գրանցվեք Medicare-ի համար անգամ եթե չեք պատրաստվում թոշակի անցնել 65 տարեկանից:

Եթե Դուք ստանում եք Social Security նպաստներ կամ Railroad Retirement Board չեկեր, մենք Ձեզ հետ կկապվենք Medicare համար իրավունակ դառնալուց մի քանի ամիս առաջ և Ձեզ տեղեկություններ կուղարկենք: Եթե Դուք ապրում եք 50 նահանգներից մեկում, Վաշինգտոնում, Կոլումբիայի շրջանում, Հյուսիսային Մարիլանդ կղզիներում, Գուլամում, Ամերիկյան Սամոայում կամ ԱՄՆ Վիրջինյան կղզիներում, մենք ավտոմատ կերպով կանդամագրենք Ձեզ Medicare Մասեր A և B համար: Սակայն, քանի որ Դուք պետք է ապահովագրվեք Մաս B ապահովագրության համար, Դուք կարող եք մերժել այն:

Մենք ավտոմատ կերպով չենք անդամագրի Ձեզ Medicare դեղատոմսով դեղերի ծրագրին (Մաս D): Մաս D-ն կամընտիր է, և Դուք պետք է ընտրեք այս ապահովագրությունը: Medicare-ի մասին ընթացիկ տեղեկությունների համար այցելեք կայքը կամ զանգահարեք ստորև նշված անվճար հեռախոսահամարով:

<b>Medicare</b>	Կայքը՝ <b>www.Medicare.gov</b> Անվճար հեռախոսահամարը՝ <b>1-800-MEDICARE</b> <b>(1-800-633-4227)</b> TTY հեռախոսահամարը՝ <b>1-877-486-2048</b>
-----------------	--

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Եթե Դուք իրավունակ դառնալիս չանդամագրվեք Մաս B և Մաս D-ի համար, Դուք հնարավոր է ուշացած անդամագրման տուգանք վճարեք այնքան ժամանակ, որքան ունեք Մաս B և Մաս D ապահովագրությունը: Բացի այդ, Դուք հնարավոր է, որ սպասեք անդամագրման համար, ինչը կհետաձգի ապահովագրությունը: Պուերտո Ռիկոյի կամ արտասահմանյան երկրների բնակիչները ավտոմատ կերպով չեն ստանում Մաս B-ն: Նրանք պետք է ընտրեն այս նպաստը:

## Health Savings Accounts (HSA), (Առողջության պահպանման հաշիվներ) և Medicare

Medicare-ի համար գրանցվելիս՝ եթե Դուք HSA ունեք, Դուք չեք կարող ներդնել Ձեր HSA-ում, երբ սկսվի Ձեր Medicare ապահովագրությունը: Եթե Դուք ներդրում կատարեք HSA-ում Medicare ապահովագրությունը սկսվելուց հետո, Դուք կարող է հարկային տուգանք վճարեք: Եթե ցանկանում եք ներդրում կատարել HSA-ում, Դուք չպետք է դիմեք Medicare, Social Security կամ Railroad Retirement Board (RRB) նպաստների համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Ապահովագրի չունեցող Մաս A ապահովագրությունը սկսվում է Medicare (կամ Social Security/RRB benefits) համար դիմելու ամսաթվից վեց ամիս առաջ, սակայն ոչ շուտ, քան Medicare-ի համար Ձեր իրավունակության առաջին ամիսը: Հարկային տուգանքից խուսափելու համար, Դուք պետք է դադարեք ներդրում կատարել Ձեր HSA-ում՝ Medicare-ի համար դիմելուց առնվազն վեց ամիս առաջ:

## «Լրացուցիչ օգնություն» Medicare-ի դեղատոմսով դեղերի արժեքների հետ կապված

Եթե Դուք սահմանափակ եկամուտ և հնարավորություններ ունեք, Դուք կարող եք որակավորվել Լրացուցիչ օգնության համար, որպեսզի վճարեք Medicare Մաս D-ի ներքո



Ձեր դեղատոմսով դեղերի համար: Social Security-ի դերն է՝ օգնել Ձեզ հասկանալ, թե ինչպես կարող եք որակավորվել և մշակել Ձեր դիմումը Լրացուցիչ օգնության համար: Իմանալու համար, թե արդյոք որակավորվում եք կամ դիմելու համար զանգահարեք Social Security-ի անվճար հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը:

## Օգնություն Medicare-ի այլ ծախսերի հարցում

Եթե Դուք քիչ եկամուտ և սահմանափակ հնարավորություններ ունեք, Ձեր նահանգը կարող է վճարել Ձեր Medicare ապահովագրությունը և, որոշ դեպքերում, «գրպանից վճարվող» այլ բժշկական ծախսերը, ինչպիսիք են՝ չապահովագրված գումարը և համա-ապահովագրությունը:

Միայն Ձեր նահանգը կարող է որոշել, թե արդյոք Դուք որակավորվում եք այս ծրագրի ներքո օգնություն ստանալու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք Ձեր Medicaid-ի, սոցիալական ծառայությունների կամ առողջապահության և հանրային ծառայությունների գրասենյակի հետ: Իրենց հեռախոսահամարը ստանալու համար այցելեք **Medicare.gov/contacts**, կամ զանգահարեք **1-800-MEDICARE** (TTY: **1-877-486-2048**):

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

## Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնետությունը վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Եզված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնետությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (հնտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today  
and tomorrow

Ինչպե՞տք է մանաք, երբստանում եք Կենսաթոշակային և մահացած թոշակառուների ցիտոմնացած ժառանգորդներին պատկեր  
What You Need to Know When You Get Retirement or Survivors Benefits (Armenian)  
Produced and published at U.S. taxpayer expense  
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:

**Social Security Administration**

Publication No. 05-10077-AM | January 2018